Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
նոյեմբերի 30-ի N 1566 - Ն որոշման

2018 - 2020 Թ Վ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ի Ծ Ր Ա Գ Ի Ր

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պետական գույքի կառավարման 2018-2020 թվականների ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) մշակվում է ծրագրի գործողության ժամանակահատվածում պետական գույքի առանձին տեսակների համար իրականացվելիք միջոցառումների և գործարքների, զարգացման առաջնահերթությունների ու սահմանափակումների նկարագրությունը սահմանելու նպատակով՝ ապահովելով Հայաստանի Հանրապետությունում այս ոլորտում իրականացվող քաղաքականության միասնականությունն ու շարունակականությունը:

2. Ծրագիրը գործում է 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում: Յուրաքանչյուր տարի, մինչև տվյալ տարվա մարտի 15-ը, ծրագրում անհրաժեշտության դեպքում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ՝ ընթացիկ և հաջորդ տարվա համար նախատեսված միջոցառումների և գործարքների նկարագրությունը սահմանելու համար:

3. Ծրագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության, հանրապետական գործադիր մարմինների ղեկավարների, մարզպետների ներկայացմամբ՝ բավարար հիմնավորման դեպքում:

II. ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Սույն ծրագրի գործողությունը տարածվում է՝

1) պետական կառավարչական և պետական այլ հիմնարկներին ամրացված գույքի վրա.

2) պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված անշարժ գույքի վրա.

3) իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետությանը պատկանող բաժնետոմսերի (բաժնեմասերի) վրա.

4) սեփականության իրավունքով պետությանը պատկանող ոչ նյութական ակտիվների վրա. այդ թվում՝ մտավոր սեփականության օբյեկտների և դրանց նկատմամբ իրավունքների վրա.

5) պետությանը պատկանող գույքային իրավունքների (բացառությամբ պետությանը պատկանող պահանջի իրավունքի) վրա.

6) ինչպես նաև այն գույքի վրա, որի նկատմամբ դատական ակտով ճանաչվել է պետության սեփականության իրավունքը:

5. Սույն ծրագրի գործողությունը չի տարածվում՝

1) պետական սեփականություն հանդիսացող հողամասերի (բացառությամբ շենք, շինություններով զբաղեցված և դրա սպասարկման համար հատկացված հողամասերի), ընդերքի, անտառների, մեկուսի ջրային օբյեկտների և պետությանը պատկանող այլ բնական պաշարների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գույքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հիմնադրված կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների վրա.

2) պաշտպանական, սահմանային, քաղաքացիական պաշտպանության, ինչպես նաև ազգային անվտանգության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի

տիրապետմանը և օգտագործմանը հանձնված կամ հանձնման ենթակա պետական գույքի վրա, որն իր նշանակությամբ նախատեսված է գաղտնի աշխատանքների կատարման համար.

3) «Սեփականության իրավունքից հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ռեժիմով պետությանը սեփականության իրավունքով հանձնված գույքի վրա.

4) հավատարմագրային կառավարման հանձնված ընկերությունների վրա:

6. Առևտրային կազմակերպություններում մինչև 50 տոկոս բաժնետոմսերը (բաժնեմասերը) պետական սեփականություն հանդիսանալու դեպքում այդպիսի կազմակերպություններում իրականացվող միջոցառումների վերաբերյալ որոշումներն ընդունվում են համապատասխան կազմակերպական-իրավական տեսակի առևտրային կազմակերպության գործունեությունը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

7. Ծրագրի նպատակներն են՝

1) պետական գույքի կառավարման բնագավառում միասնական քաղաքականության վարումը.

2) չաշխատող պետական գույքի վերագործարկումը խթանող գործիքակազմի ներդրումը.

3) պետական գույքի արդյունավետ կառավարման արդյունքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների ավելացումը.

4) պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր (բաժնեմասեր) ունեցող իրավաբանական անձանց մրցունակության բարձրացումը, դրանց գործունեության ֆինանսատնտեսական ցուցանիշների բարելավումը.

5) պետական գույքի կազմի ու նախընտրելի կառուցվածքի ձևավորումը և օպտիմալացումը.

6) պետական գույքի օտարման և մասնավորեցման բնագավառում իրականացվող քաղաքականության արմատական բարեփոխումը.

7) պետական ոչ առևտրային կազմակերպությունների և պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների լուծարման գործընթացի արդյունավետ իրականացումը.

8) պետական գույքի հաշվառման և անշարժ գույքի գրանցամատյանի վարման համակարգի կատարելագործումը.

9) պետական գույքի արդյունավետ օգտագործման ճանապարհով տնտեսության իրական հատվածում ներդրումների ներգրավման ապահովումը:

8. Ծրագրով սահմանված նպատակների իրագործման համար պետք է լուծվեն հետևյալ խնդիրները՝

1) պետական գույքի հաշվառման և անշարժ գույքի գրանցամատյանի վարման համակարգի արդիականացում, մասնավորապես, տեղեկությունների փաստաթղթային հավաքագրման համակարգի փոխարեն էլեկտրոնային ինտեգրացված համակարգի մշակում և ներդրում.

2) պետական գույքի մասնավորեցման բնագավառում առավել արդյունավետ մասնավորեցման ձևերի կիրառում, մասնավորապես, ֆոնդային բորսայի միջոցով պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի վաճառքի կազմակերպում.

3) «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ մասնավորեցման ծրագիր) ընդգրկված սոցիալական ուղղվածություն ունեցող պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մասնավորեցման գործընթացում այնպիսի նոր մոտեցումների և ձևերի կիրառում, որոնց շնորհիվ կապահովվեն մասնավորեցվող կազմակերպությունների պրոֆիլի և անձնակազմի պահպանումը, սպասարկման որակի բարելավումը և այլն.

4) պետական գույքի օտարման գործընթացում 2018 թվականին առավել արդյունավետ և գործուն վաճառքի եղանակների և մոտեցումների կիրառում, մասնավորապես, էլեկտրոնային աճուրդի միջոցով օտարման ենթակա գույքի վաճառքի, ինչպես նաև ներդրումային բարձր գրավչություն ունեցող գույքի որպես՝ «գործարար միավորի վաճառքի» մոտեցմամբ և առանց նախապես հայտարարված առաջարկի աճուրդային եղանակով կազմակերպում և իրականացում.

5) տնտեսական շրջանառությունից դուրս մնացած ոչ գրավիչ պետական գույքի վաճառքի գնի տարաժամկետ վճարման ձևաչափի կիրառում.

6) պետական ծախսերի կրճատման և հանրությանը մատուցված ծառայությունների մատուցման որակի բարելավման համար պետական գույքի կառավարման մի շարք լիազորությունների պատվիրակման հնարավորություններն ուսումնասիրելը և առաջարկություններ ներկայացնելը.

7) պետական գույքի օտարման, երկարաժամկետ և կարճաժամկետ վարձակալության տրամադրման ընթացակարգերի պարզեցում և նվազագույն վարչարարության ապահովում.

8) հիսուն և ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը հավատարմագրային կամ կոնցեսիոն կառավարման հանձնելու պրակտիկայի լայնորեն կիրառում.

9) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործող համակարգի արմատական բարեփոխում.

10) պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունավետության որոշման գործիքակազմի մշակում և ներդրում, ինչպես նաև այդ կազմակերպությունների գործունեության արդյունքների գնահատում և գործադիր տնօրենների, կառավարիչների, պետության լիազոր ներկայացուցիչների աշխատանքի խրախուսման նոր ձևերի ու գործիքակազմի կիրառում.

11) պետական գույքի տարանջատում՝ ըստ հետևյալ կառուցվածքային խմբերի՝

ա. առաջնային նշանակության գույք, որի միջոցով իրագործվում են պետության ռազմավարական, սահմանադրական և օրենսդրական գործառույթները,

բ. առևտրային նշանակության գույք, որի միջոցով ուղղակիորեն լուծվում են տնտեսական աճի խնդիրները:

III. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Սույն ծրագրի իրականացման հիմքում դրված են պետական գույքի կառավարման հետևյալ սկզբունքները՝

1) պետական գույքի՝ կառավարման յուրաքանչյուր օբյեկտի (օբյեկտների խմբի) ծրագրային ժամանակահատվածի համար կառավարման նպատակի (նպատակների) սահմանում և ամրագրում.

2) կառավարման արդյունավետության շարունակական ապահովում, որը պարտադիր է պետական մարմինների գործունեության գնահատման ժամանակ.

3) պետական գույքի կառավարման տարբեր մակարդակներում կառավարիչների, գործադիր տնօրենների աշխատանքների գնահատման համակարգի հստակ սահմանում.

4) կառավարման ոլորտում մասնակիցների շահերի ներդաշնակության ապահովում.

5) պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով առևտրային կազմակերպություններում միջազգային լավագույն փորձի վրա հիմնված կորպորատիվ կառավարման սկզբունքների կիրառման գործիքակազմի ներդրում.

6) պետական-մասնավոր համագործակցության պարզեցված պայմանների ներդրում:

10. Պետական գույքի կառավարման ընդհանուր գերակայություններն են՝

1) գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման ապահովումը.

2) գույքի արժեքի և որակական հատկանիշների պահպանումը.

3) առաջնային նշանակության գերակայությունը. եթե միևնույն գույքն ունի երկակի նշանակություն, այն դասվում է առաջնային նշանակության գույքի խմբին.

4) առաջնային նշանակության գույքը հիմնականում ենթակա չէ մասնավորեցման.

5) պետական գույքի նշանակությունը ենթակա է պարբերական վերանայման (օրինակ, յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ).

6) պետական գույքի համալրման նախապատվելի եղանակը պետական գնումներն են, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում գույքի ձեռքբերումը՝ նախնական համարժեք փոխանակությամբ:

11. Պետական գույքի կառավարման գերակայություններն են՝ կախված գույքի նշանակությունից՝

1) առաջնային նշանակության պետական գույքի կառավարման համար՝

ա. պետության սահմանադրական և օրենսդրական գործառույթների, վարչական և ռազմավարական նպատակների կատարման համար անհրաժեշտ գույքի նկատմամբ հիմնական պահանջներին նրանց լիակատար համապատասխանությունը,

բ. այս պահանջները բավարարող տարբերակներից առավել մատչելի և ռեսուրսախնայողի ընտրությունը.

2) առևտրային նշանակության պետական գույքի կառավարման համար՝ օգտագործման այլընտրանքային տարբերակներից նախապատվությունը տրվում է այն տարբերակներին, որոնք առավել նպաստում են տնտեսական աճի ապահովմանը, մասնավոր հատվածում օտարերկրյա և ներքին ներդրումների ներգրավմանը, շուկայական մրցակցության խթանմանը, արտահանման խթանմանը, աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրագործմանը, Հայաստանի Հանրապետության

պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, մարդկային կապիտալի զարգացմանը, պետության այլ գործառույթների կատարմանը:

IV. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

12. Պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների կառավարման համակարգի կատարելագործման, դրանց կողմից պետական գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) հստակեցնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների կազմն ու կառուցվածքը և օպտիմալացնել դրանց քանակը, մասնավորապես՝

ա. լուծարել մասնավորեցման ծրագրում չընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունները՝ համաձայն N 1 ցանկի,

բ. վերակազմակերպել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունները՝ համաձայն N 2 ցանկի.

2) կատարելագործել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների գործունեության ֆինանսատնտեսական վիճակի մոնիթորինգի համակարգը, մասնավորապես՝

ա. սահմանել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ֆինանսատնտեսական ցուցանիշները՝ ելնելով այդ կազմակերպությունների եռամյա գործարար ծրագրերի ցուցանիշներից,

բ. համապատասխան վերադաս կառավարման մարմինների կողմից սահմանել հսկողություն պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների համար սույն ծրագրով սահմանված ծրագրային ցուցանիշների կատարման նկատմամբ,

գ. վերադաս համապատասխան կառավարման մարմնի նախաձեռնությամբ մշակել և իրականացնել վնասով ու ցածր շահութաբերությամբ աշխատող՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական առողջացման ծրագրեր՝ դրանց սնանկացումը թույլ չտալու համար,

դ. իրականացնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկում (մոնիթորինգ).

3) ներդնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի (բաժնեմասերի) կառավարման առաջավոր մեթոդներն ու ձևերը, մասնավորապես՝

ա. կազմակերպել ուսուցում (ներառյալ օրենսդրության, կառավարման մեթոդների իրազեկում) և որակավորման բարձրացման դասընթացներ՝ պետական գույքի կառավարման գործընթացում ընդգրկված անձանց (գործադիր տնօրեններ, կառավարիչներ, պետության լիազոր ներկայացուցիչներ) համար,

բ. սահմանել պետական գույքի կառավարման գործընթացում ընդգրկված աշխատողների (գործադիր տնօրեններ, կառավարիչներ, պետության լիազոր ներկայացուցիչներ) աշխատանքի խրախուսման այնպիսի ձևերն ու մեխանիզմները, որոնք պետք է կախված լինեն նրանց գործունեության արդյունքներից.

4) բարձրացնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների և պետական ոչ առևտրային

կազմակերպությունների անհատույց իրավունքով տրամադրված գույքի օգտագործման արդյունավետությունը, այդ նպատակով՝

ա. սահմանել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունավետության որոշման և պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված անշարժ գույքի օգտագործման արդյունավետության գնահատման ցուցանիշները,

բ. իրականացնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների գույքի (անշարժ և շարժական) և պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված անշարժ գույքի օգտագործման արդյունավետության պարբերաբար ուսումնասիրություններ,

գ. կատարելագործել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպություններին և պետական ոչ առևտրային կազմակերպություններին վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու գործիքակազմը:

13. Պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության բարելավման, ինչպես նաև ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ հավատարմագրային կառավարման հանձնում, վարձակալությամբ տրամադրում, կոնցեսիոն պայմանագրով տրամադրում, գույքի գրավադրման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած ներդրումային ծրագրերի իրականացում, ինչպես նաև մասնավորեցում հետևյալ դեպքերում՝

1) պետական մասնակցությամբ ընկերությունների ոչ արդյունավետ կառավարման.

2) պետական մասնակցությամբ ընկերությունների ոչ մրցունակ լինելու.

3) համապատասխան ոլորտում հանրության կարիքների լիարժեք կառավարումն ապահովելու տեսանկյունից բավարար քանակի ոչ պետական ընկերությունների գործունեությամբ պայմանավորված պետական մասնակցությամբ ընկերություններին վերապահված պարտավորությունների կարևորության մակարդակի նվազման.

4) պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերով (բաժնեմասով) այն ընկերությունների մասնավորեցման, որոնք անհրաժեշտ չեն պետական գործառույթների իրականացման համար:

14. Ապահովել N 9 ցանկում ընդգրկված պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ծրագրավորված տնտեսական ցուցանիշների կատարումը, մասնավորապես, ապահովել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում շահույթի ծավալի շարունակական ավելացում:

15. Իրականացնել հսկողություն N 8 ցանկում ընդգրկված մասնավորեցված, օտարված, նվիրաբերված, վարձակալությամբ, ինչպես նաև անհատույց օգտագործման իրավունքով տրված օբյեկտների գնորդների, նվիրառուների, վարձակալների և օգտագործողների կողմից ծրագրային ժամանակահատվածի ընթացքում ստանձնած ներդրումային պարտավորությունների նկատմամբ:

16. Պետական գույքի առանձին օբյեկտների օգտագործման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) տնտեսական շրջանառության մեջ ներգրավել պետությանը պատկանող՝ չօգտագործվող կամ ըստ նպատակային նշանակության չօգտագործվող կամ մասնակիորեն օգտագործվող անշարժ գույքի օբյեկտները, մասնավորապես՝

ա. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմին հանձնել չօգտագործվող կամ ըստ նպատա-

կային նշանակության չօգտագործվող կամ մասնակիորեն օգտագործվող պետական գույքը՝ համաձայն N 3 ցանկի,

բ. օպտիմալացնել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների գույքի կազմը՝ դրա վերաբերյալ որոշում ընդունելու իրավասություն ունեցող ղեկավար մարմնի (անձանց) որոշումների հիման վրա:

17. Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասին տեղեկությունների մատչելիությունն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել 2018 թվականի ընթացքում հետևյալ միջոցառումները՝

1) կատարելագործել պետական գույքի հաշվառման համակարգը, մասնավորապես՝

ա. լրամշակել և հստակեցնել պետական գույքի կազմի մասին առկա տեղեկությունները,

բ. ներդնել պետական գույքի հաշվառման ամբողջական էլեկտրոնային ինտեգրացված համակարգ, որը հասանելի է պետական գույքի կառավարման գործընթացում ընդգրկված բոլոր պետական մարմինների համար,

գ. բարեփոխել պետական գույքի միավորների մասին տեղեկությունների տրամադրման կարգ,

դ. իրականացնել Հայաստանի Հանրապետության անունով պետական գրանցման ենթակա (գրանցում չունեցող)՝ անշարժ գույքի գույքագրում:

V. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ ԵՎ ՕՏԱՐՈՒՄԸ

18. Մասնավորեցման ծրագրում ընդգրկված և մինչև սույն ծրագիրն ուժի մեջ մտնելը չմասնավորեցված (չլուծարված) առևտրային կազմակերպությունների և այլ

օբյեկտների մասնավորեցման կամ լուծարման առաջարկելու ժամկետները սահմանվում են սույն ծրագրով՝ համաձայն N 4 ցանկի:

19. Սույն ծրագրի N 1 հավելվածի N 4 ցանկում ընդգրկված առևտրային կազմակերպությունները և այլ օբյեկտները մասնավորեցվում կամ լուծարվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

20. Մասնավորեցման ծրագրում չընդգրկված, օտարման առաջարկվող անշարժ գույքի և այն անշարժ գույքի, որի՝ պետությանը պատկանող գույքային իրավունքներն առաջարկվում է փոխանցել իրավաբանական ու ֆիզիկական անձանց, կազմը սահմանվում է՝ համաձայն N 5 ցանկի:

21. Պետական գույքի վարձակալությունից ծրագրավորված մուտքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է N 6 ցանկում:

22. Պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարների սպասվելիք մուտքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է N 7 ցանկում:

VI. ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

23. Հայաստանի Հանրապետության պետական և տարածքային կառավարման մարմիններն իրավունք չունեն ծրագիրն ուժի մեջ մտնելուց հետո դրանում ընդգրկված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների և պետական այլ գույքի նկատմամբ իրականացնելու այնպիսի գործառույթներ, որոնց արդյունքում անհնար կդառնա պետական գույքի նկատմամբ՝ սույն ծրագրով

սահմանված միջոցառումների իրականացումը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության պետական և տարածքային կառավարման մարմինները պարտավոր են սույն ծրագրում ընդգրկված ընկերություններին թույլ չտալ իրականացնել ոչ համարժեք կամ զեղչ գներով խոշոր գործարքներ, ընկերության գործունեության հետ չկապված ծախսեր (գործարքներ), մասնավորապես, բաժնետիրոջ լիազորություններ իրականացնող պետական կառավարման մարմնի աշխատողների գործուղման, բարեգործական, ընկերության հիմնական գործունեությանը չառնչվող՝ սոցիալական ուղղվածություն ունեցող և այլ անհատույց գործարքներ:

24. Ծրագրում ընդգրկված պետական գույքի նկատմամբ այլ սահմանափակումներ կարող են սահմանվել սույն ծրագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով:

VII. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

25. 50 տոկոս և ավելի պետական սեփականությամբ բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների գործունեությանն առնչվող՝ սույն ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության անունից այդ կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինները:

26. Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման նկատմամբ հսկողությունն իրականացվում է համապատասխան վերադաս կառավարման մարմինների կողմից:

27. Սույն ծրագրի 8-րդ և 17-րդ կետերով սահմանված գործընթացները կազմակերպելիս առաջնորդվել «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության

և տեխնիկական ընդհանուր պահանջները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն որոշմամբ սահմանված անվտանգության և տեխնիկական նվազագույն պահանջներով:

28. Ծրագրով սահմանված նպատակների իրագործման և միջոցառումների իրականացման աստիճանը որոշելու նպատակով ծրագրի կատարման մասին մշակվում է տարեկան հաշվետվություն, որը Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացվում մինչև հաջորդող տարվա մայիսի 1-ը:

Ց Ա Ն Կ N 1

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿ-ՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ (ԲԱԺՆԵՄԱՍԵՐՈՎ) ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Առևտրային կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Հանրապետական գործադիր մարմնի անվանումը	Լուծարման վերաբերյալ առաջարկության հիմնավորումը
1.	«Վարչատնտեսական» ՓԲԸ	քաղ. Երևան, Նալբանդյան 28	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ներկայիս վարչական շենքի օտարման հետ կապված ընկերությունում բացակայելու է անշարժ գույքի վարձակալությամբ և ենթավարձակալությամբ տրամադրելու գործառույթը
2.	«Նոր Նորքի ուսանողական ավան» ՓԲԸ	քաղ. Երևան, Մոլդովական 12	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	ՓԲԸ-ի կողմից նպատակային գործունեություն չի իրականացվում

Ց Ա Ն Կ N 2

ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՏՈՒՄԵՐՈՎ (ԲԱԺՆԵՄԱՍԵՐՈՎ) ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Առևտրային կազմակեր-պության անվանումը	Գտնվելու վայրը	Պետական բաժնեմասի մեծությունը (%)	Հանրապետական գործադիր մարմնի անվանումը	Վերակազմա-կերպման առաջարկվող մոտեցումը	Վերակազմա-կերպման նպատակը
1.	«ՈԿՖ Բանավանի ԱԱՊԿ» ՓԲԸ	քաղ. Արարատ, ՈԿՖ Բանավան	100	ՀՀ Արարատի մարզպետարան	ՊՈԱԿ	Մարզի բոլոր ԱԱՊԿ-ները վերակազմա-կերպվել են ՊՈԱԿ-ների

Ց Ա Ն Կ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՀԱՆՁՆՎՈՂ՝ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԿԱՄ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻՈՐԵՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ

NN ը/կ	Ձեռք բերվող գույքի անվանումը	Նախարարության, հանրապետական գործադիր մարմնի անվանումը	Հիմնավորում
1	2	3	4
1.	«Թալինի Պոլիկլինիկա» ՓԲԸ-ի նախկին շենք*	Արագածոտնի մարզպետարան	Չի օգտագործվում:
2.	Ավտոտնակ	Արագածոտնի մարզպետարան	Չի օգտագործվում:
3.	«Թալինի ԲԿ» ՓԲԸ-ի ինֆեկցիոն բաժանմունք	Արագածոտնի մարզպետարան	Չի օգտագործվում:
4.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության քրեակատարողական հիմնարկի նախկին հիվանդանոց (քաղ. Հրազդան, Ջրառատ թաղամաս)	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	Չի օգտագործվում:
5.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության քրեակատարողական հիմնարկի նախկին «Գյումրի» մեկուսարան (քաղ. Գյումրի, Աճեմյան 62)	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	Չի օգտագործվում:
6.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության Ամասիայի բաժնի նախկին վարչական շենք և ավտոտնակներ, ՇՄ (Գ. Ամասիա, 2 -րդ փող. 32 շենք)	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	Չի օգտագործվում:
7.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության Աշոցքի բաժնի նախկին վարչական շենք (ՇՄ, գ. Աշոցք, 1-ին փող., 1-ին փակուղի, 1-ին շենք)	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	Չի օգտագործվում:
8.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՊՊԳՎ Գյումրու պահպանության բաժին (քաղ. Գյումրի, Ղանդիլյան 3 նրբ.)	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	Չի օգտագործվում:
9.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն Թալինի բաժնի կիսակառույց վարչական շենք (քաղ. Թալին, Քոթանյան փող.)	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	Չի օգտագործվում:
10.	Կաթսայատուն, Նոր-Նորք (Ա. Միկոյան 15/2)	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	Չի օգտագործվում:
11.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՊՊԳՎ Մասիսի պահպանության բաժանմունք (Մասիս կայարան, Շիրակի 6)	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	Չի օգտագործվում:

12.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՊՊԳՎ (քաղ. Երևան, Մյասնիկյան փող. 43)	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	Չի օգտագործվում:
13.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՊՊԳՎ Վաղարշապատի պահպանության բաժին (Արմավիրի մարզ, գ. Ծաղկունք)	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	Չի օգտագործվում:
14.	ՀՀ Արմավիրի մարզի քաղ. Էջմիածին, Մ. Մաշտոցի N 138 հասցեում գտնվող՝ 126,3 քառ. մետր մակերեսով 3 ավտոտնակ	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմ	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից չի օգտագործվում:
15.	ՀՀ Արմավիրի մարզ, քաղ. Արմավիր, Ջիվանու N 6 հասցեում գտնվող՝ 159,6 քառ. մետր մակերեսով վարչական շենք	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմ	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից չի օգտագործվում:
16.	«Վան» հյուրատուն	ՀՀ Շիրակի մարզպետարան	«Վան» հյուրատունն իր 3 քարաշեն տնակներով հաշվառված է մարզպետարանի հաշվեկշռում 1998 թվականից: Այն չի շահագործվում ավելի քան 15 տարի: Անցած ժամանակահատվածում, պետական գույքի կենտրոնացված, առավել արդյունավետ կառավարման նկատառումներից ելնելով, մարզպետարանը բազմիցս հանդես է եկել գույքը վարչությանը հանձնելու նախաձեռնությամբ: Ներկայումս շրջանառության մեջ է ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ «Վան» հյուրատունն անհատույց օգտագործման իրավունքով «Շիրակ Հայրենակցական Միավորում» ՀԿ-ին տրամադրելու համար:
17.	Առողջապահության N 1 մասնաշենք	ՀՀ Շիրակի մարզպետարան	Գյումրի քաղաքի Շչեդրինի 5/2 հասցեում գտնվող Առողջապահության N 1 մասնաշենքը, որը երկաթյա կոնստրուկցիաներով հավաքովի երկհարկանի շինություն է

			(այսուհետ զույք), հաշվառված է մարզպետարանի հաշվեկշռում 1996 թվականից: Տարիներ շարունակ շինությունում գործունեություն են ծավալել մարզպետարանի աշխատակազմի մի քանի կառուցվածքային ստորաբաժանումներ, որոնք 2012 թվականին տեղափոխվել են մարզպետարանի հիմնանորոգված՝ գլխավոր մասնաշենք: Առ այսօր զույքը չի շահագործվում, այն գտնվում է քաղաքի կենտրոնական մասերից մեկում, մեր բոլորի ուշադրության կենտրոնում է Գյումրի քաղաքը ժամանակավոր տնակներից ձերբազատելը, կան նաև հավակնություններ տարածքի վերաբերյալ համապատասխան ներդրումային ծրագրեր իրականացնելու համար:

Ց Ա Ն Կ N 4

ՄԱՄՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՉՄԱՄՆԱՎՈՐԵՑՎԱԾ (ՉԼՈՒԾԱՐՎԱԾ) ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՄՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ԼՈՒԾԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ

NN ը/կ	Մասնավորեցման ծրագրում ընդգրկված ընկերության (օբյեկտի) անվանումը	Ծածկագիրը՝ ըստ մասնավորեցման ծրագրի	Հանրապետական գործադիր մարմնի անվանումները	Առաջարկության բովանդակությունը (մասնավորեցնել կամ լուծարել)	Առաջարկվող ժամկետը (տարի)
1	2	3	4	5	6
1.	«Հայփոստ» ՓԲԸ	90073	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
2.	«Հայավտոկայարան» ՓԲԸ	90117	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	մասնավորեցում	2020 թ.
3.	«Ագրոսպասարկում» ՓԲԸ	90100	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
4.	«Գյուկոնդ» ԲԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	90117	ՀՀ ֆինանսների նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
5.	«Արտակարգ իրավիճակների օդանավակայան» ՓԲԸ	90119	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
6.	«Վարդենիսի ստոմատոլոգիական պոլիկլինիկա» ՓԲԸ	90123	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	մասնավորեցում	2018 թ.
7.	«Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի «Տավուշի ուսուցիչների վերապատրաստման կենտրոն» ԴՓԲԸ		ՀՀ կրթության և գիտության նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
8.	«Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ	90107	ՀՀ առողջապահության նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
9.	«Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ	90108	ՀՀ առողջապահության նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
10.	«Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» ՓԲԸ	90109	ՀՀ առողջապահության նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
11.	«Մաշկաբանության և սեռավարակաբանական բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ	90110	ՀՀ առողջապահության նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.

12.	«Դիլիջան» մանկական հակատուբերկուլյոզային առողջարան» ՓԲԸ	90112	ՀՀ առողջապահության նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
13.	«Երևանի երկաթուղու պոլիկլինիկա» ՓԲԸ	90113	ՀՀ առողջապահության նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
14.	«Հանրապետական անձավաբուժական կենտրոն» ՓԲԸ	90115	ՀՀ առողջապահության նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
15.	«Օշական» մանկական վերականգնողական կենտրոն» ՓԲԸ	90111	ՀՀ առողջապահության նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
16.	«Նևրոզների կլինիկա» ՓԲԸ	90114	ՀՀ առողջապահության նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
17.	«Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ» ՍՊԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	90116	ՀՀ առողջապահության նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
18.	«Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ	90075	ՀՀ առողջապահության նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
19.	«Արաքս» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	62021	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.
20.	«Ավտոմատիկա» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	90074	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.
21.	«Գեոէկոնոմիկա» ՓԲԸ	62132	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.
22.	«Երառսպասարկում» ՓԲԸ	74730	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.
23.	«Երվերելակ» ՓԲԸ	90038	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.
24.	«Երևանի ջրամատակարարման ուղեմաս» ԲԲԸ	60347	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.
25.	«Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	21876	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.

26.	«Ընդերքաբան» ԲԲԸ	62130	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.
27.	«Ընդերքաբանի Աղբյուրակի տեղամաս» ՓԲԸ	62130	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.
28.	«Ընդերքաբանի Արեգի տեղամաս» ՓԲԸ	62130	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.
29.	«Ընդերքաբանի Մեղրաձորի տեղամաս» ՓԲԸ	62130	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.
30.	«Ընդունելությունների տուն» ՓԲԸ	90105	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.
31.	«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ» ՓԲԸ	90102	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.
32.	«Հ. Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիա» ՓԲԸ	90103	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.
33.	«Հրազդանի մարզահամալիր» ՓԲԸ	90051	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.
34.	«Հայառշինվերանորոգում-1» ՓԲԸ	74593	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.
35.	«Ձիասպորտի կենտրոն» ՓԲԸ	90057	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարում	2018-2020 թթ.
36.	«Ագրոսպասարկում» ԱՄ-ի Ախուրյանի շրջ. միավորում» ԲԲԸ	61110	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարման առաջարկություն	2018-2020 թթ.
37.	«Ագրոսպասարկում» ԱՄ-ի Իջևանի շրջ. միավորում» ԲԲԸ-ի պետական սեփակա-նություն հանդիսացող բաժնեմասը	62308	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարման առաջարկություն	2018-2020 թթ.

38.	«Ագրոսպասարկում» ԱՄ-ի Ամիի շրջ. միավորում» ԲԲԸ-ի պետական սեփա-կանություն հանդիսացող բաժնեմասը	61100	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարման առաջարկություն	2018-2020 թթ.
39.	«Բերրիություն» ԱՄ-ի Վարդենիսի շրջ. միավորում» ԲԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	61103	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարման առաջարկություն	2018-2020 թթ.
40.	«Դվին կոնցեռն» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	21843	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարման առաջարկություն	2018-2020 թթ.
41.	«Բյուրեղ» հանքային ջուր» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	20370	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարման առաջարկություն	2018-2020 թթ.
42.	«Սևակ և Սաթինե» ՍՊԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնեմասը	90104	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	մասնավորեցում կամ լուծարման առաջարկություն	2018-2020 թթ.
43.	«Էներգաիմպեքս» ՓԲԸ	90122	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
44.	«Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր» ՓԲԸ	90120	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
45.	«Հավաքական թիմերի մարզական կենտրոն» ՓԲԸ	90121	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	մասնավորեցում	2018-2020 թթ.
46.	«Միջուկային և ռադիացիոն անվտանգության ԳՏԿ» ՓԲԸ	90106	ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե	մասնավորեցում	2018 թ.

Ց Ա Ն Կ N 5

ՄԱՄՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ, ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ , ՈՐԻ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է ՓՈԽԱՆՑԵԼ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

NN ը/կ	Գույքի անվանումը	Գտնվելու վայրը	Մակերեսը (քառ. մ)	Հանրապետական գործադիր մարմնի անվանումները	Գույքային իրավունքների գրանցված լինելու հանգամանքը	Հաշվեկշռում ամրագրված լինելու հանգամանքը
1	2	3	4	5	6	7
1.	ՀՀ Կոտայքի մարզ, քաղ. Աբովյան, Ուսանողական թաղամաս, N 4/5	Ճաշարան	708.28	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
2.	ՀՀ Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Անի թաղամաս, 7-րդ փողոց, N 6/1	Տարածք	178.62	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
3.	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Սևան, Կ. Դեմիրճյան 6/3	Սննդի սպասարկման կետ	369.36	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
4.	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Վարդենիս, Երևանյան փողոց, N 2/1	Օժանդակ շինություններ՝ 1) կաթսայատուն 2) գոմ 3) ծածկ	99.0 240.0 396.0	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
5.	ՀՀ Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Արևելյան N 7	Դպրոցի շենք	617.28	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
6.	Հրաձգարան (քանդված)	քաղ. Արմավիր, Նալբանդյան 3	42.7	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
7.	«Տաշիր» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկական ինֆեկցիոն բաժանմունքի նախկին տարածք	քաղ. Տաշիր, Գրիբոյեդովի 3	447.8	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
8.	Բացվածք (տարածք)	ՀՀ Սյունիքի մարզ, քաղ. Ագարակ Սայաթ-Նովա 7/3	233.1, 22.2 (ընդհ. օգտ. տարածք)	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է

9.	«Մեղրու տարա-ծաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից առանձնացված՝ 1) ինֆեկցիոն բաժանմունք 2) ծննդատուն	ՀՀ Սյունիքի մարզ, քաղ. Ագարակ, Հիվանդանոցային 1/2	336.5 300.9	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
10.	Տարաների ֆաբրիկա կաթսայատուն արտադրամաս տր. ենթակայան տր. ենթակայան	ՀՀ Արմավիրի մարզ, գ. Մյասնիկյան	289.52 70.0 1140.0 24.0 24.0	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
11.	«Ծաղկահովիտի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի փայտե տնակ	ՀՀ Արագածոտնի մարզ, Ծաղկա-հովտի համայնք, Հոկտեմբերյան փողոց N 16/2 շենք	150.77	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
12.	«Ծաղկահովիտի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկայի շենք	ՀՀ Արագածոտնի մարզ, Ծաղկա-հովտի համայնք, Հոկտեմբերյան փողոց N 16/3 շենք	441.29	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
13.	Ոչ բնակելի տարածք	ՀՀ Լոռու մարզ, քաղ. Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս 3/9-55	32.4	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
14.	Տարածք	ՀՀ Լոռու մարզ, քաղ. Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս 3/10-51	307.8	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
15.	Շենքի բացվածք	ՀՀ Շիրակի մարզ, քաղ. Մարալիկ, Աբովյան փողոց, շենք 21 N 1	263.65	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
16.	,Հայջրնախագիծ» ՓԲԸ-ի նախկին տարածք արտա-դրական շենք ծածկ ծածկ ենթակայան պարիսպ	ՀՀ Արարատի մարզ, Սայաթ Նովա գյուղ, Մասիս Ռանչպար խճուղի 1	719.2 274.6 32.4 20.8 6.6 գծմ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
17.	Վարչական շենքի 2-րդ հարկից մաս	ՀՀ Սյունիքի մարզ, քաղ. Մեղրի, Մեղրաձոր փ., 3/1	47.6	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է

18.	Ավերակ	ՀՀ Արագածոտնի մարզ, Վարդենուտի համայնք, 1 փողոց, 31/2	354.44	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
19.	«Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկայի շենքից առանձնացված տարածք	քաղ. Հրազդան, Սպանդարյան 47/3	273.01	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
20.	Վարչական տարածք	քաղ. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Գերցենի փ. 25	1443.0	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
21.	Նախկին հիվանդանոցի շենք	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Ճամբարակի համայնք, Տիգրան Մեծի փողոց 17/3	2120.9	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
22.	Բենզինի պահեստ	ՀՀ Լոռու մարզ, քաղ. Ալավերդի, Սանահին կայարան	45.2	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
23.	Փորձագիտական մասնաշենք Ավտոտնակ	ՀՀ Կոտայքի մարզ, քաղ. Հրազդան, Պետրոս Դուրյան փողոց	618.67 49.5	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
24.	Ոչ բնակելի տարածք	քաղ. Երևան, Էրեբունի համայնք, Դիմիտրովի 89 շենք, N 50 տարածք	268.4	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
25.	ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչության Շիրակի մարզային փորձագիտական կենտրոն	ՀՀ Շիրակի մարզ, Ամասիայի համայնք, փողոց 26, օբյեկտ 17	155.99	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
26.	Վարչական շենք ավտոտնակ	քաղ. Ապարան, Գայի փողոց	413.44	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
27.	Փորձագիտական կենտրոն	ՀՀ Լոռու մարզ, քաղ. Տաշիր, Գրիբոյեդովի թաղամաս 4	281.9	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
28.	Հիգիենիկ հակա-համաճարակային հսկողության կենտրոն, ավտոտնակներ	քաղ. Արմավիր, Մխիթար Հերացու 5	2128.8 179.5	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է

29.	Վարչական շենք	ՀՀ Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Վ. Սարգսյան փողոց 24/8	1036.5	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
30.	Փորձագիտական լաբորատորիա	ՀՀ Շիրակի մարզ, քաղ. Մարալիկ	154.05	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
31.	Շենք, շինություններ	ՀՀ Արարատի մարզ, քաղ. Մասիս	2993.7	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
32.	Պահեստ	քաղ. Երևան, Շենգավիթ, Բագրատունյաց փ. N 89	1080.0	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
33.	Երկաթուղու արտադրական համալիր	ՀՀ Կոտայքի մարզ, քաղ. Բյուրեղավան, Օղակաձև փ., N 4/2	707.85 85.0 7.7	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
34.	Կաթսայատուն, ենթակայան	ՀՀ Տավուշի մարզ, քաղ. Իջևան, Տերյան փ. 12/2	370.8 24.1	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
35.	Նախկին գրասենյակի տարածք, ծածկ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Շորժայի համայնք	29.1 5.6	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
36.	Պահեստ	քաղ. Երևան, Արաբկիր, Ն. Զարյան փ. 22/8	56.6	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
37.	Վարչական շենք	քաղ. Երևան, Աջափնյակ, Միրաքյան փ. 56	227.77	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
38.	քաղ. Երևան, Շենգավիթ, Արցախի փող. 16/16 շենք-շինություն	շենք-շինություն	430.6	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
39.	ՀՀ Լոռու մարզ, քաղ. Սպիտակ, Շիրակի խճուղի	ճաշարան	95.85	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
40.	ՀՀ Արարատի մարզ, քաղ. Մասիս, Շիրակի փող., 1-ին նրբ., 2/1	Մասիսի բնակելի տաքացվող տնակ	17.8	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է
41.	ՀՀ Արարատի մարզ, քաղ. Մասիս, Շիրակի փող., 1-ին նրբ., 2/2	Մասիս կայարանի լոկոմոտիվ բրիգադների հանգստի տուն	1037.2	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Գրանցված է	Հաշվառված է

Ց Ա Ն Կ N 6

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՄՈՒՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

NN ը/կ	Օբյեկտի անվանումը, որը նախատեսվում է տրամադրել վարձակալությամբ	ՀՀ պետական բյուջե կանխատեսվող դրամական մուտքերը (հազ. դրամ)			Այլ (համապատասխան ՊՈԱԿ-ների, հիմնադրամների) հաշիվներ կանխատեսվող դրամական մուտքերը (հազ. դրամ)		
		2018 թ.	2019 թ.	2020 թ.	2018 թ.	2019 թ.	2020 թ.
1.	Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույք	130647.1	88604.7	67679.7	26350.9	18000.0	18000.0

Ց Ա Ն Կ N 7

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՈՒ ՁԵՂՆԱՀԱՐԿԵՐՈՒՄ ԿԱՊԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՄՈՒՏՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

NN ը/կ		Կանխատեսվող դրամական մուտքերը, հազ. դրամ		
		2018 թ.	2019 թ.	2020 թ.
1.	**Շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման վարձավճարի մուտքեր ընդամենը, այդ թվում՝**	160,000.0	166,000.0	172,000.0
2.	ՀՀ պետական բյուջե կանխատեսվող դրամական մուտքերը, այդ թվում՝	41,800.0	43,300.0	45,000.0
	Բյուջե	32,200.0	33,400.0	34,800.0
	Այլ կառավարչական հիմնարկների արտաբյուջեներ	9,600.0	9,900.0	10,200.0
